կոյնա։ Խօրօխպէր տիւրս էլաւ գինք որ տէսաւ, խարցուց թէ, տի՛ւ վո՞վ ես։—Ին էլ պատասխան տվեց թէ, ես քըոյ ախպէր Մհէրի լաճն եմ. կասա արի[1] քըոյ տուռ՝ Մըրոյ քեաղքէն փախայ էկայ։—Զէնով Յովան ասաց, տիւ բարով ես եկե, որտի, ես քե գլխուս վէրէն պիտի չախեմ, քանի որ տիւ իմ ախպօր աղէն ես։

33. Քանի մը ժամանակ պախեցին, տէսան որ Տուլիթ շատ կուտէր, ուրենք էլ ախքեատ էին չեն կանայ չախէ։—Զէնով Յովան ասաց Տուլիթին, որտի, արե քե աննենք գեղին նախըրըդ, հեամ հալս կառնես, հեամ տուն էրկու խաց առնելով կուշտ կուտես։ Տուլիթն էլ ընտունեց, էլաւ նախըրըտ. նախխր ամբաւ տաշտ ու սար կարածէր։ Օր մը Տուլիթ նախխր խամբըրեց տէսաւ որ՝ 150 հատ էր, ասաց. էս տաւարը քիչի, էրթամ քիչմէլ գնանեմ որ իմ հալսն ու հայն շատ էլնի։ Իրիկուն էկաւ տուն խօրօխպօր ասաց. «Զիկ մէկ ջուխտ պօղպատէ սոլ շինի, որ ես իմ գործն աղէկ կառավարեմ»։ Խօրօխպէրն գնաց տարընին ջուխտ մը սոլ շինել տվաւ, բերեց Տուլիթին։

34. Տուլիթ իւր սոլերու վէրէն շատ ուրախցաւ, համան խագաւ նախխր ավեց տեխ սարն. գնաց ինչ կանտեար առջ, խոզ, տալան[2] ուրիշ ճանաւարներ կէր ժողվեց բերեց մէջ նախխրին։ Խօրօխպէր որ կէտաւուր խաց տարաւ Տուլիթին, տէսաւ որ Տուլիթն խալալ խարամ տաւարներ խառնե յիրար. մէկ մէկից կփախնեն, Տուլիթն էլ ինկե ինոնց խաւէն կժողվի կբերի վեր յիրարու. էն կանտար[3] վազերէր որ պօղպատէ սոլեր ծակուեր կառավեր էր։

35. Խէտ խետուն[4] Զէնով Յովան տառձաւ քաղաք՝ թամբեխ[5] արաց որ ուրենց տուներ չինեն[6]. քինչի Տուլիթ ըսկում[7] ճանաւար ժողվե մէջ նախխրին, թէ որ մտնեն մէջ քեախքին, ձև պիթիւն պիտի ուտեն. տուներ չէնեցէք չուռ ճանաւարներ փախնեն էրթան սար։ Տուլիթն էր՝ իրիկուն խաղար խարամ պիթիւն մէկ տեղից նախխրն բերեց քեաղաք։ Գնաց խար ինոր շատ կանչեց, մարդ տիւրս չէլաւ. էլ թող խաւ նախխր. միջի ճանաւարներ փախան գնացին սար. քեախքցիք տիւրս էլան ամէն մարդ իւր տաւար տեղաւորելու։

36.—Տուլիթ ինոնց ասաց. Աստուած ձեր տուն աւերի, տիւք թող տվիք հմէն կլաւ[8] տաւըրքեր փախան սար, մնացին զապուռքտեր[9]. էլ ես ձե նախըրդութեն չեմ անե։ Խօրօխպէրն էկաւ բարկացաւ վեր Տուլիթին, ասաց. «Տիւ որ ըսկնայ[10] կանես, էլ ես քե չեմ կանայ չախե. արօր կէրթաս գնայ»։

---

1 Յուսով գնալ. ապաւինել։ 2 Առիւծ։ 3 Անչափ։ 4 Անմիջապէս։ 5 Պատուէր։ 6 Գոցեն, փակեն։ 7 Այնքան։ 8 Դեր։ 9 Նիհարներ։ 10 Այսպէս։